ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0010 քաղ. Երևան, Վ. Սարգսյան 5, հեռ. /ֆաքս/ 511-601

№ 18-1715/գ-12
«22» 08 2012թ.

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի նախագահ
Արթուր Սաքունցին

Կից ուղարկում եմ, Ձեր 2012 թվականի օգոստոսի 22-ի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

Առդիր՝ որոշումը՝ երկու թերթ:

ՀՀ հատուկ քննչական ծառայության
ՀԿԳ քննիչ՝ Գ. Ս. Հովակիմյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

քրեական գործի հարուցումը մերժելու մասին

24 օգոստոսի 2012թ. ք. Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Ս. Հովակիմյանս, քննարկելով Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից ստացված հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերը,

Պ ա ր զ ե ց ի՝

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից 2012 թվականի օգոստոսի 22-ին ՀՀ հատուկ քննչական ծառայություն հաղորդում է ստացվել այն մասին, որ 2012 թվականի օգոստոսի 18-ին նշված կազմակերպություն է դիմել Վանաձոր քաղաքի բնակիչ Նարեկ Ափինյանը և հայտնել, որ 2012 թվականի օգոստոսի 17-ին բերման է ենթարկվել ոստիկանության Վանաձորի բաժին, որտեղ ոստիկանության աշխատակիցներն իր նկատմամբ դրսևորել են անհարգալից վերաբերմունք, մոտ 10 անգամ ձեռքով հարվածել են գլխին ու պարանոցին և հարկադրել են բացատրություն տալ:

Հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով պարզվել է հետևյալը.

2012 թվականի օգոստոսի 17-ին Վանաձոր քաղաքի բնակչուհի Սաթիկ Վարոսյանը հաղորդում է տվել ոստիկանության Վանաձորի բաժնում այն մասին, որ 2012 թվականի հուլիսի կեսերին Վանաձոր քաղաքի բնակիչ Համլետ Սաղումյանը վիճաբանել է ամուսնու՝ Սուրեն Բաղալյանի հետ, իսկ մի քանի օր հետո նաև ծեծի է ենթարկել ու պատճառել մարմնական վնասվածք:

Նշված հաղորդման կապակցությամբ տված բացատրությունում Սաթիկ Վարոսյանը հայտնել է, որ Համլետ Սաղումյանի և ամուսնու միջև տեղի ունեցած վիճաբանությանը ներկա է գտնվել նաև Վանաձոր քաղաքի բնակիչ Նարեկ Ափինյանը:

Վերոգրյալի հիման վրա՝ 2012 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 00:30-ին, Նարեկ Ափինյանը բերման է ենթարկվել ոստիկանության Վանաձորի բաժին:

Բերման ենթարկվելուց հետո Նարեկ Ափինյանի հետ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ Արամ Ղազարյանը և ոստիկանության Վանաձորի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Արտյուշա Հարությունյանն իրականացրել են օպերատիվ հարցազրույց, որից հետո Նարեկ Ափինյանը ներկայացվել է Սաթիկ Վարոսյանի հաղորդման հիմավ վրա նյութեր նախապատրաստող, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային քննչական բաժնի քննիչ Տիգրան Հակոբյանին և տվել է Սաթիկ Վարոսյանի հայտնած հանգամանքներն հաստատող բացատրություն:

Արամ Ղազարյանը և Արտյուշա Հարությունյանն իրենց բացատրություններում հերքել են Նարեկ Ափինյանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, հայհոյելու, բացատրություն տալուն հարկադրելու, ինչպես նաև նրան ծեծի ենթարկելու հանգամանքները և միաժամանակ հայտնել են, որ ըստ իրենց Նարեկ Ափինյանը Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին նման տեղեկություն է տվել հավանաբար այն պատճառով, որ կասկածանքի տակ դրվի Համլետ Սաղումյանի կողմից Սուրեն Բաղալյանին ծեծի ենթարկելու հանգամանքն հաստատող, իր իսկ կողմից տրված, բացատրության իսկությունը:

Ոստիկանության աշխատակիցների կողմից Նարեկ Ափինյանի նկատմամբ ոչ հար-

զալից վերաբերմունք դրսևորելու և ծեծի ենթարկելու հանգամանքը հերքել է նաև Տիգրան Հակոբյանը:

Նարեկ Ափինյանը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից ստացված հաղորդման կապակցությամբ տված բացատրությունում հերքելով ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու և ծեծի ենթարկելու հանգամանքները, հայտնել է, որ վերոհիշյալ կազմակերպությանը տված իր տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը, նման տեղեկություն է տվել զուտ այն պատճառով, որ ոստիկանության աշխատակիցներն այլևս իրեն չանհանգստացնեն և ոստիկանության բաժին չհրավիրեն, ու միաժամանակ խնդրել է անհետևանք թողնել այդ կապակցությամբ նախապատրաստված նյութերը:

Նարեկ Ափինյանի նկատմամբ բռնություն գործադրվելու հանգամանքը հերքվել է նաև դատաբժշկական փորձաքննության թիվ 581 եզրակացությամբ՝ համաձայն որի Նարեկ Ափինյանի մարմնի վրա մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Այսպիսով, նախապատրաստված նյութերով պարզվել է, որ բացակայում է հանցագործության դեպքը, ուստի վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 55-րդ հոդվածով՝

Ո ր ո շ ե ց ի՝

1. Նյութերով քրեական գործի հարուցումը մերժել՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառով:
2. Որոշման մասին հայտնել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահին, Նարեկ Ափինյանին, Արամ Ղազարյանին և Արտյուշա Հարությունյանին:

ՀՀ հատուկ քննչական ծառայության
ՀԿԳ քննիչ՝ Գ. Ս. Հովակիմյան